

ՊԱՅՄԱՆՔ

Լոյս Գաւառական Թերթը կը հրատարակուի Զորեգոյրի օրերը :

Տարեկան գինն է 2 արծաթ մէկնիս :

Փոսթայի ծախքը խմբագրութեան վրայ է :

Մէկ քերթը 40 փառս :



ՊԱՏԻԱՌԱԿԱՆ ԹԵՐԹ

ՊԱՅՄԱՆՔ

Նամակ կամ ո եւ գրութիւն պէտք է ուղղել Առ Մ. Գախարանեան Կ. պոլիս, Չազմագերար, Սիւնգիլլի խան քիւ 47, Տեստեան տարանը :

Մանուցման տողը մէկ անգամի համար 5 դր. 2 անգամի համար 2 դր. է, իսկ արեւի անգամներու համար զաւտ սակարկութիւն կ'ըլլայ :

ԱՋԳԱՅԻՆ

Հայ—թուրքայ ոմանց մէջ տակաւին դադարած չեն քննադատութիւններն ընել խմբին պատրիարքական ինքրոյն :

Այդ քննադատութեանց մէջ, ներուի մեջ քեզ, կան անքաղաքադիտական կէտեր, որ իբր թէ ինչպստ Ս. Պատրիարք Հօր մէջ կը բերուին, սակայն ատենց հեղինակները կերակր թէ չեն ուղեր չըջանայեցութեամբ շարժել, այլ կուզեն դուրս տալ ինչ որ մտքերնուն կանցնի :

Եթէ զրեւ հարկ լինի, մեք ալ կընամք դուցէ իրենցմէ շատ աւելի բան դրել և քննադատել, բայց ի նկատ առնելով ժամանակը, դէպքերն և բուն իսկ մեր ոչ նուազ տաքնուպայի կացութիւնը, կըրեմք, առնել չէ :

Խնդիրն այն է որ Ս. Պատրիարքը կը հրատարի և կը սնդէ իւր հրատարականի վրայ յայտարարելով ընդ միշտ թէ և իւր պաշտօնավարութիւնն այլ եւս յոյժ մնաստկար է Ազգին համար :

Ինչ ընել պէտք է այսպիսի փափուկ պարագայի մը մէջ . —

— Ինչ որ ընել պէտք էր, ըրաւ Ազգ. Ժողովը. չընդունեց Ն. Սրբադնութեան հրատարականը, վստահութիւն յայտնելէ չդադրեցաւ, իւր (Ն. Սրբազնութեան) ձեռնարկներն Ազգին և տէրութեան համար օգտակար հոգւակեց և յայտարարեց թէ Ս. պատրիարք Հօր պաշտօնավարութիւնը մնաստկար չէ :

Բաց աստի՛ պատգամաւորութիւն պատգամաւորութեան վրայ զրկեց, երեսփոխանութիւնն անձամբ իւր Նահադահին ոտքը դնաց և եթէ Ն. Սրբադնութիւնն որ առաջ լրագրաց մէջ հրատարակութիւն չտար, նոյն օր բացակայ երեսփոխանաց 100ին զրեթէ 35ն ալ պիտի երթար :

Յարգելի քննադատք ինչո՞ւ չեն ուղեր տեսնել այս ամենն, ինչո՞ւ ճիգ կը թափեն երեսփոխանութիւնն անուանարկելը, ինչո՞ւ կուրանան երեսփոխանութեան ծառայութիւններն, ինչո՞ւ երեսփոխանութեան ուրով և ազգին արժանապատուութիւնը վիրաւորելու վարձ վորձեւ կը ճեղնին և աղագային յարմար բանաձեն անճահարար ըլլա՞ն կանուանեն :

Միթէ այդ ըրածներն ազգասիրութիւնն է, և ինչ անտակ ազգասիրութիւնն է որ կը ջանան ցոյց տալ աշխարհի թէ Հայոց Պատրիարքը կը հրատարի իր և Ազգ. Ժողովոյ մէջ անհամաձայնութեան պատճառաւ, մինչդեռ Ն. Սրբազնութեան հրատարման պատճառներն յայտնի են, և ինքն Ս. Պատրիարքը մեզի ալ խոսած է

ասիէ 5 ամիս առաջ և մեք հրատարակած եմք Լոյսի 117 և 118 թիւերուն մէջ :

Մեք երեսփոխան գտնուելուն համար չէ որ կը գրեմք այս տողերն, այլ արդարութիւնն արիւրար պաշտպանելու և անգամ մ'ալ յայտնելու համար թէ՛ Ազգին մէջ հակապատրիարքեան կուսակցութիւնն մը կայ ըսելը կատարելապէս անքաղաքադիտութիւնն է. որ հարկաւ չհամաձայնիր մեր ազգային շահուցը :

Եթէ ցուելու արժանի պարագայ մը կայ, այն ալ սա է որ այդ տեսակ յօդուածներ հիւրանկարող լրագրաց խմբագիրք երեսփոխան են, և մէյ մ'ալ ո՞տ որ Հայրենիքի յօդուածագիր Տ. Խ. Սարաճ փոխանակ երեսփոխանական ամսուի վրայ կենարու և անդ իւր կարծիքներն սկզբունքները յայտնելու կը թողու իւր ամսուուն և լրագրի միջոցաւ հարուածել կը փորձէ երեսփոխանութիւնն, որ չեմք ըսեր թէ դերձ է քննադատութեան, սակայն օր մը եթէ հարկ լինի որ ամենք ինքրոյն մէջ, և քննմք պարագաները. ազգինը դուցէ բողոքովն տարբեր լինի :

Սակայն չեմք զիտեր թէ այն ատեն որո՞ւ վրայ կը ծանրանայ օրատափնամատուութիւնը, մեր, թէ անոնց վրայ՝ որք կատարեալ զմեզ :

Կը ինքրեմք որ այս կէտն ալ լաւ ուշադրութեան առնուն ինքրոյն կեղև միայն տեսնող արեւոյ քննադատք :

Ուրեմն՛ խօսք հասկցողին շատ բարև : —————

Հ Բ Ա Ի Բ

ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՄՆՍ

Ազգային Ժողովը նիստ ունի յառաջիկայ Հինգշաբթի, 24 Յունիս ի Ղալաթիա :

Ատենք պիտի բացուի ժամ 2 1/2ին : Հրակիրալ են Ազգ. երեսփոխանք իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ :

Մեամ խորին յարգանքով Պատրիարքական Փոխանորդ ԳԵՈՐԳ. Ծ. Վ. ԲՈՒՍՃՈՒՔԻՆՍ 22 Յունիս 1882

Օ Ր Ա Կ Բ

Ա. Տեղեկագիր վարչութեան ի մասին Պատրիարքական ինքրոյն : Բ. Ընտրութիւնը նախաքննիչ Դուանաց :

ԱՋԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգ. Ժողովոյ քուէարկած որոշումը մասնաւոր թագրիրով մը վարչութեան

կողմէ Գեր Տ. Միւսէն Սրբազան և Գեր. Պատ. Փոխանորդն երէկ դատական գործոց նախարարին մատուցին, որ խոտտացաւ նախարարոց Ժողովին հազարգեղ :

Թագրիրին կամարը զոր հրատարակած էր Հայրենիք իւր երէկուան թուովը, մեք ևս կը փութամք արատապել աստ :

« Ամեն Ս. Պատրիարք Հայրը անձնական տկարութեան պատճառաւ թէ և 1881 Նոյեմբեր 13ին հրատարական սուաւ առ Բ. Դուռն և առ Ազգային Ժողովը, սակայն թէ՛ կառավարութիւնը և թէ՛ Ազգը նորա հրատարականը մերժեցին, նկատելով որ Ներսէս սրբազան Տէրութեան և Ազգին օգտակար ծառայութիւններ մատուցած է, իսկ Ն. Սրբազնութիւնը միշտ սնդեց անձին անբաւականութիւնը պատճառելով, եւ թէ և Ազգային Ժողովը ուղերձներու և ողատգամաւորութեանց միջոցաւ ինքրեց և աղաչեց որ Պատրիարքական պաշտօնը շարունակէ, սակայն Ն. Սրբազնութիւնը դարձեալ յանձն չառաւ :

« Ուստի Ազգ. վարչութեան խառն Ժողովը ի դիմաց Ազգ. Ժողովոյ Պատրիարքական ինքրոյն վիճակը և անկէ հետեւելիք մնանը չայտնական կառավարութեան ներկայեցում, անմիջական հրամանի կապատէն :

— Հնդկաստանէն մեր պատուարժան բարեկամներէն մէկուն գրուած նամակէ մը գոհութեամբ կը տեղեկանամք թէ տեղոյն ազգայիններէն 100 ոսկի հանգանակուեր է, որոյ կէտն Հայոց Միացեալ Ընկերութեանց եւ միւս կէտը Խիզանու Ուսումնասիրաց Ընկերութեան յատկացեալ է եղեր :

— Տիգրիս բնակեալ Մեծ. Տ. Արսէն թովհաճեան, որ ծանօթ է իւր ինչինչ օգտակար հրատարակութիւններով, մի քանի օրէ ի վեր մայրաքաղաքս կը գտնուի, ուր քիչ մ'ատեն կ'ենայ յետոյ՝ պիտի շարունակէ ճամբորդութիւնն :

— Նոյնպէս Տիլիսի Արձաքանը անուն ընտիր շարժաթիւթի մը աշխատակից Մեծ. Տ. Յարոյ եւս որ ծանօթ է իւր գրչովը, Պոլիս եկած է ուր պիտի մնայ մի քանի ամսոյ չափ :

— Ազգային Նշանաւոր գրագետներէն Մեծ. Տ. Գ. Չիլիկերեան ալ մայրաքաղաքս եկած է անձնական գործոց պատճառաւ :

— Գոհութեամբ կ'իմանամք թէ Պարսից վեհ. Շահը Պելլինի դեսպանութեան պաշտօնն ալ յանձնել է Հայազգի Վսեմ. Մեքեան խանին :

— Նոյնպէս գոհութեամբ կը ծանուցանեմք թէ վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ Միւթեմոյղի ստախման

Նորհէ Տրոսեան Աղնուաշուք Տիրան Պէյին

— Ուրեմն իւր թիւ 8եան Գեր. Գէորգ Վարդապետի ձեռամբ Միացեալ Ընկերութեան 12 ոսկի զրկուած է ի հաշիւ պարտահաշիւի տոմսակաց :

— 2 1/2 ոսկի ալ շուկայի ոսկերաց ընկերութեան արուած է յիշեալ Միացեալ Ընկերութեան :

ՀԱՅ ՀԱՆՃԱՐ ՄԸ

Պ. Սարգիս Տիրանեան անուն բնիկ Սամաթիայի երիտասարդ մը, որ Պաղատական Մեծ. Խօքէնտէր Էֆէնտիի վանիք քարիզ դնացած է և ուր կատարեալ գործելու կը պարապի պատկերահանութեան արուեստն, մեր մասնաւոր տեղեկութեանց համեմատ՝ պիտի կրնայ քիչ ատենէն փառք ըլլալ Հայ—ազգին և համայն թուրքերոյ՝ ըստ վկայութեան իւր ուսուցչոյ՝ որոյ յարգն ու համարումը դժբաւած է իւր վանապիտութեամբ և ուշիմութեամբ :

Պ. Ս. Տիրանեանի մէկ գործն հոս եկած և ի տես գրուած է ի Ռեւոյ Մեծ. Ապտուլլահ եղբորոց գործարանը :

Նոյն գործն՝ որ տեսնողներուն ուղղ գրուած է, ի դին երկու արձամք մէջիտի վիճակահանութեան պիտի դրուի 500 բաժնի վրայ եւ արդիւնքըն յատկանայ հեղինակին երկամեայ ծախուցն ի քարիզ, զի Պ. Տիրանեան աղքատիկ ընտանեաց զաւակ է, եւ որոյ ասիէ առաջ երեք տարուան ծախքն հոգացուած էր հանդանակութեամբ, որուն մասնակցած են նաեւ բարձրաստիճան թուրքեր :

Չերմայէս հրաւեր կը կարգուեր ամեն կարգի ազգայնոց, որոյէս զի յիշեալ վիճակահանութեան մասնակցելով ինքնայօժար փութան քաջալերել զնոյն երիտասարդ, որ այժմէն կը լսատանոյ լուսոյն ապագայ մը, եւ որ անշուշտ պիտի լինի Հայ—ազգին պարծանքներէն մին :

Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

Յ. Կ. ԱՇՃԱՆ

Կ. Պոլիս Մէրճան շաբթ թիւ 33

Յիշեալ գրատան մէջ կը վաճառին Պոլսոյ իզմիրի երուսաղեմոյ Էջմիածնայ վեհեպիկի վեհնայի քարիզու արարածներէն ելած ամեն տեսակ գիրք եւ գտագրքեր զանազան կաղմերով եւ յափաւոր գնելով :

Շատ գնողներու համար մասնաւոր զեղծ կըլլայ. նաեւ ծախու կառնուին եւ կը վաճառուին հին եւ գործածուած գրքեր : Գտառուներէ ալ յանձնարարութիւնը կընդունուին եւ փութով ու ինամով կը կատարուին :



ՄԱՍԻՒՍՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐՊԱՊԵՏ ՄՈՒՐԱՏԵԱՆ

1870 թուին Կ. Պոլսոյ մէջ Մշեցիներէն մի զխաւոր մաս մի ընկերութիւն կը կազմէ որ կոչի Մասիւոնեան ընկերութիւն, որոյ կեդրոնն այժմ տեղւոյս մէջ է...

Յիշեալ ընկերութիւնն ամեն տարի սովորութիւն ունի տեղ մի ժողովել և հոն իւր ընդհ. ժողովոյ զուգարեան անկախ մնացած խնդիրներ կարգադրել և նոր ընտրութեանց քուէարկութիւնն ընելէ յետոյ մի ընկերական խնդրք կը կազմէ...

(1) Սյր վանքն Արուեստասիրաց ընկերութեան հսկողութեան ներքև էր...

Թիւնն է քարոզել եղբայրսիրութիւն և մարդասիրութիւն. Վանահայր բնաւ չէ կարող արդարանալ իւր խօսքերուն մէջ...

ՄԱՍԻՍՈՒՅԷՆ՝

Ամսոյս սկիզբները իջողատու կողմերէն 11-12, տարեկան արու երակայ մը իւր ծնողաց հետ (ծնողք ըլլալին ալ անստոյգ) կուգան յԱմասիա...

Այս մասին երկրորդն կողմունք յետ ձիք և ջերմ սակարկութեան. երեք Օսմ. ոսկի (կերևնայ թէ՛ երկու ոսկին երկու թաղականներու և միւս մէկն ալ պսակիչ քահանայի համար) կը յանդիմանեն իրենց սակարկութեան վախճանը...

Հ Ա Մ Բ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն.

« Չորս զաւկի տէր եմ » կըսէ Մուրացիկ մը ձեռքը բաց, Ամբշնալով կը խրճրէ Խեղճը պատաս մը չոր հաց...

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ՄՇԱԿԱԿԱՆ ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ (Եթէ՛ երբեք երկոյն շարունակութիւն) փուռ կամ փտահող. — Ընդհանրապէս երկիրը կազմող հողային տարերաց մէջ կը գտնուի նաև փոքրիկ մաս մը փուռ (humus) կոչուած նիւթը...

բաստ գանձ մը կը կաղմնն արտերնուս մէջ և հունձքերնուս յաջողութիւնը կ'ապահովեն, ուստի փուռը իրաւամբ նկատուած է իրր երկրի մը պարարտութեան դիւնաւոր պատճառ մանաւանդ թէ իւր ներկայութիւնը հողին կակղութիւն կուտայ, իւր սեզոյնը լաւ կընդունի ջերմութիւնը անձրևի ջուրերը ձմեռով խոնաւութիւն կը պահէ և զայն իւր կակղ և փերուսն օդն ալ դիւրաւ թափանցեցնող զանգուածին մէջ առատօրէն կը կաղմուին զանազան գիւնիական նիւթեր որք անհրաժեշտ են բուսման:

Փտահողոյ լաւագոյն տեսակը խոտերու փտութիւնէ յառաջ եկածն է, անտառային ծառերու թափուկ տերեւներէն և ճախնային տեղեր բուսած վայրի անկերէն յառաջ եկածը թէև անտառ կըլլայ բայց գէշ յատկութիւններ կուենան և հնձոց այնքան չեն կրնար օգտել: Տարիներով մշակութեան զանազան յարմար դործողութիւնը կատարել պէտք է որ ասանք բարեխառնին, սկստք է նախ առուակներ բանալով ջրերին ցամքեցնել եթէ ճախնային տեղեր գտնուին և ապա յաճախ հերկելով հանդերձ բոս կարի միջինը և կըլ խառնել մէջերին: Ի վերջոյ բոս որում փուտն է բուն պարարտութիւն կոչուած և հողին արժէքն աւելցնող նիւթը, հող տանելու է միշտ որ սա չի պակսի հողերուս մէջէն այլ միշտ աւելնայ բոս կարի: Ասոր համար ձեռքերնուս եկածին չափ որքան բուսական կամ կենդանական մնացորդք և փտութիւնը ըլլան պէտք է արտերնուս խոտերնը, կենդանեաց աղբը, բուսական որ և է մնացորդք, ճախններու տիղմը, խրամներու և փոսերու տակ ժողովուած պարարտուց գիւրքը, աներու և քաղաքներու աւելուածքն ու աղբուքը և ինչ անպատահարտութեան աղբիւրներ են որոնցմէ երկրագործը և միայն երկրագործը կրնայ օգուտ քաղել և իւր բաղդը շինել: (1)

ԱՌՈՂԶԱԲՈՆԱԿԱՆ

ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐ ԱՐԳԻՒՆՔՆ Ի Կ ՊՈԼԻՍ Թ. Թշուռութեան դարձանքը Միշնէ ցայս վայր Կ. Պոլսոյ պէս մի մեծ քաղաքի մէջ տիրող առողջական թշուռութեան պատճառները առանձինն և մանրամասնօրէն զննելի, թէև մի մեծ հատոր ալ անբաւական պիտի ըլլար այդ նպատակին ծառայելու:

Միշնէ ցայս վայր Կ. Պոլսոյ պէս մի մեծ քաղաքի մէջ տիրող առողջական թշուռութեան պատճառները...



(սագաթը) պատճառաւ չեն կրնար աշխատել օրուան պարէնը հայթայթելու համար: Սոյնօրինակ թշուառները մխիթարելու ամենալաւ միջոցներն են ազգականաց, բարեկամաց և դրացեաց ձեռնառութիւնները:

Գեղեցիկ սեռը պարտի այդ մասին դեղեցիկ օրինակներ տալ, ինչպէս ըրաւ ժամանակին Տիկին Լամառը: Սա առաջարկեց որ իւրաքանչիւր թաղի դիւրակեաց տիկնայք իրենց աղքատ ու հիւանդ դրացիներուն այցելուութիւններ տայ զանոնք մխիթարելու դարձանելու և ամեն կարիքի օգնութիւն քնելու համար: Նոյնպէս Տիկին Պիօ, ամուսին համանուն հուշակաւոր բնագիտին, իւր թաղին բոլոր ձերեւ խօթացեալ աղքատները այցելելու և սիրովեալ քաղցր և օրինակելի պաշտօնը յանձն առած էր: Յաւանք է յոյժ որ իրական սեռին մէջ Տիկին Լամառընի և Տիկին Պիօյի դեղեցիկ օրինակաց հետեւողներ շատ քիչ անգամ լուծած են, մասնաւորապէս իրական սեռունքին մէջ որ, հանդերձ կարեւոր բացառութեամբ, «օր» մի մասութեան մէջ աւելի փայլել կը ճշնի, քան ուրիշ որ և է բարեգործական ձեռնարկութեան մէջ:

Չմտնանք սակայն յիշել հոս Հայ Տիկինաց մէջ մի պարկեշտ անուն, որ արժանացաւ երբեմն Տօքթ. Թիբեաբեանի ներբողին: Տիկին Մ. Մարիամ Սէլեան, քոյր Մեծ. Տեարց Սերովբէ և Սարգիս Կիւլպիկեանի որ իւր հայրենեաց թաղաս գիւղին աղքատներն ու ողբերը ինամարկելու դիտմամբ ընկերութիւն մը կազմեց յօնամասար անուամբ, և որ յիւրաւի բազում անոք և անտէրունկ թշուառներ երկար ատեն սիրովեց և խնամակերպ: Իցի՛ւ թէ շատեր հետեւէին Տիկին Սէլեանի սոյն մարդասիրական ազնիւ օրինակին:

Բարեգործական այդ մասնաւոր ձեռնարկութիւններէ զատ՝ բոլոր բազմաժողովուրդ կեդրոններու մէջ նպաստամատայց հանրային հաստատութեանց դէպքը անհրաժեշտ է նորածին և ընկեցիկ որբոց, յիմարաց և մանաւանդ զառամեալ ձերոց համար, որք այլ ևս ուժածափի և բազմիցս ուշաթափ են: Սոցա համար մասնաւոր նպաստարաններու Սառա ՝ ռէկ հարկ անհրաժեշտ կայ, նոյնպէս անտէր որբերու համար, կրթարաններ. բայց ասոնց անունս այլ մեզ անձանօթ է, և անմահն Յարութիւն Պեղծեանի հիմնարկած հիւանդոց Փրկիչն խաղիւղի քաղաքեան բարենպաստի որբանոցէն զատ՝ ուրիշ որ և է բարեգործական հաստատութիւն մը գրեթէ չունինք, և սակայն անոնց վիճակնաւ աննախանձելի կացութեան մը մէջ է:

Հիւանդանոցներու պէտքի մասին խօսելն ալ աւելորդ է, մանաւանդ ի Պոլսոյ պէս բազմաժողով քաղաքներու համար. այդ մասին շատ խրատիւ և իրաւամբ ըսած է Տօքթ. Էմին Պեճմի, Թուրք բժիշկը իւր Պեղբէլի առողջաբանութեան թարգմանութեանը մէջ, քառասուն անկողին պարունակող հիւանդանոց մը հիմնել քառասուն Այասօֆեայի պէս միլիթ չիննելէ աւելի բարեգործութիւն է:

Մեծ քաղաքներուն մէջ թշուառութեան մի ուրիշ պատճառն է բազմազաւակութիւնը:

Գործաւոր մը կամ արհեստաւոր մը երբ ամուսնացած չէ, հանդիս է, իւր շահովը կապրի և ինք իրմէ զատ

աչ զոր ունի մտածելու, մինչդեռ երբ ամուսնանայ, այն երկուստեք աղջիկը զոր կ'առնէ և որ չամուսնացած գործելով կը շահեր, ամուսնանալէ ետք՝ տանք գործերով և իւր աղքատ խնամքով զբաղած ըլլալով բոլորքն տանեկան բեռը ամուսնոյն վրայ կ'իյնայ, այն ատեն իւր քրտնաթոր աշխատանայ արդիւնքը եղող դուզնաքեայ գումարը անբաւական կը լինի իւր ընտանեաց ապրուստը պահարկելու: Այդպիսի պարագայից մէջ մասնաւոր թէ ընդհանուր նպատակներու կարօտ են անոնք, նորածին տղոց համար քառլ կոչուած մասնաւոր տուններ, մեծկակ տղոց համար այլապէս կրթարաններ և պատասխարաններ այդ գործը շատ աղէկ կրնան տեսնել:

Այդ տեսակ թշուառութեան տուղեր անհերք լաւագոյն միջոցն է գործաւորաց դասը քաղաքներէն հանելով գիւղերու մէջ տեղաւորել և զանոնք երկրագործութեամբ պարասպեցնել: Հայոց մէջ մանաւանդ գաղթականութիւնը դաւաճելէն դէպ 'ի Պոլսոյ երթալով կը շատնայ, և այդ գաղթականութեան մէջ կայ մի խումբ, եղիչի խումբ արդարեւ, որ սոսկ բեռնակրութեամբ կը պարասպեցնուի:

Ինչ է բեռնակրի մը շահածը. — գրեթէ ոչինչ, տարիներով հետէ 'ի հայրենեաց, պանդխտութեան ամեն տեսակ դաւաճութեանց ենթակայ լինելէ ետք, վաստակած գումարեաց գումարը կերթայ Հայ բեռնակրը քանի մը ամուսն մէջ իւր ամուսնոյն և զաւակներուն հետ ուսելու և կրկին կը ստիպուի դառնալ 'ի Պոլսոյ բաղդին դաւաճութիւնները մինչև ի մրուր քամելու: Մինչդեռ նա եթէ իւր գիւղը մնար, ոչ բազում աշխատութեամբ իւր ընտանեաց ծոցը կը վայելէր հանդիստ և երկար կեանք:

Բայց պիտի ըսուի թէ երկրագործութիւնը դաւաճաց մէջ շատ նեղ վիճակի մը մէջ է, թէ ապահովութիւն և հաղորդակցութեանց գիւրդութիւն չկայ. սոսք, ըստ իս, սկար պատճառներ են, և եթէ ձեռնհասներու կողմէն կամք և աշխատութիւն չը զլացուին, այդ բոլոր չնչն պատճառները կ'անհետանան և երկրագործութիւնն ալ առիճին շատ աղէկ վիճամբ կրնայ հասնիլ: Առողջարանական տեսակետով դաւաճացոյն կամ լաւ և ս վիւղացւոյն իւր երկրին մէջ մնալը հարկաւոր է, վասն զի գիւղերէն մեծ քաղաքներ գիւղ ժողովուրդային հոսանքին վրայ ախտերը աւելի դիւրաւ և աւելի կատարութեամբ կը յարձակին քան նոյն իսկ այդ բազմաթիւ կեդրոնապայքերու բնակիչներուն: Այդ ինքիւր մէկ անգամով լուծել անկարելի թուելով ինձ, մի ուրիշ անգամ կրկին խօսիլ կը խոտանամ:

Ռ. ՌՕՊԵՆՍՈՆ  
—  
ՕՂԱՊԱՌԻՎՈՎ ՄՐՅՈՒՄ  
(Շար. և վերլ. ԳԵՄ 232)

Այս Օբային սանձ ըսուածը կտաւէ կոնսաճեւ պարկ մ'է, մինչև մէկ խորանարդ մէթը ջուր պարունակելու չափ մեծ: Երբ ծովը նետեն զայն, ճիշդ խորիսի դերը պիտի կատարէ և օգտապարիկը այս հազար քիւօ ջուրին ծանրութենէն քաշուելով, ծովին երեսը պիտի մնայ: Գիշերը այս կերպով պիտի անցնեն: Առաւօտուն, երբ արեւ սկիւ կաղը տարածել, ճամբ

այ պիտի ելլեն նորէն, հետեւին տանելով նաև այդ կոնսաճեւ պարկը՝ մաս մը ջուրով լեցուած, այնպէս որ փոխանակ նաւախիճի և աւաղի, այդ ջուրը պիտի թափին, երբ հարկ ըլլայ հետզհետէ օգտապարիկը թեթեւցընել: Խիտտ հաւանական է որ այս նոր գործութեամբ երեք չորս օր կարենան ճամբորդել: Միջերկրականը՝ որչափ ալ մեծ, լիճ մ'է վերջապէս, և ո՛ր կողմ ալ երթայ մարդ, ցամաքին կը հանդիպի: Մարտիկայէն մինչև Ալճերիա 750 քիլոմէթր հեռաւորութիւն կայ և իտալիայէն Սպանիա դրեթէ 1200: Օբային ընթացից միջին արագութիւնն ալ 40էն 50 քիլոմէթր ըլլալով, մէկ ժամուան մէջ, ի բաց առեալ արտաքոյ կարգի արգելքներ, կը յուսացուի որ երկու, երեք, մինչև իսկ մէկ օրուան մէջ օգտապարիկը Միջերկրականի վրայէն անցնելով ցամաքը դաննէ:

Այս է հաւ յիշեալ գիտնական ընկերութեան նպատակը: Իրենք գիտեն արդէն թէ կրնայ ըլլալ որ կեանքերին վրայ տան, բայց գիտութեան սիրով վառուած այս մարդիկ, միթէ փոյթ կրնեն, իրենց համար դժուարութիւն յարուցանող կէտը դրամի խնդիրն է: Այսպիսի օգտապարիկ մը պատրաստելու համար (50000) յիսուն հազար ֆրանքի կը կարօտին և ընկերութեան զանձն անբաւական է այս գումարն հայթայթելու: Ուստի սկսած են հանգստակութիւն մը բանալ և Բարիդու մէջ հանդէս մը պիտի տան մօտերս ի նպատակ այս ձեռնարկին:

Երբ վեհանձն հարկերն մէկ կողմէն իրենց նուէրներով օժանդակեն սոյն գործին, ընկերութեան անդամք ալ իրենց անձը և կեանքը պիտի նուիրեն և վասնզի դնեն, Եւ Գաղղիացիք այս ամենը կրնեն, ո՛չ այնքան գիտնական փորձ մը յաջողցնելու եռանդով, սրբան Անդրիայցիները գերազանցելու նախանձանդութեամբ: Ինչ աղւոր բան է մրցումը:

—  
Վանէն ու Մուշէն գանդատներ կուգան այս օրերս ի Պատրիարքարան հողային խնդրոց համար: Պաշտպէի կողմը Այայիտ անուն ընդարձակ դաշտագետին մը կայ, մերայնոց սեպհակահան անցեալ օրերն քուրդք դրաւելու երած էին, բայց չէին յաջողած և Հայք մշակելու հրաման ընդունած էին կառավարութիւնէն. այս օրերս մինչայն քուրդք դարձեալ զբաւելու էլեր են, և երկիւղ կայ թէ այս անգամ պիտի յաջողին, ուստի Պատրիարքարանի միջնորդութեամբ բարձրագոյն հրաման կ'ենդրուի: Մշոյ Ս. կարագետ վանքին հողերուն մէկ մասին վրայ ալ կը բռնանան քուրդք. Հինաղանդեղով տեղական կառավարութեան հրամանաց չեն ելներ. զինու զորութեամբ արտաքսել հարկ լըլլայ ըստ անօրինութեան մեծ. Կառավարչին Մշոյ, և գրուել է Բաղէշի կուսակալութեան, բայց անլսելի մնացած ըլլալով բարձրագոյն հրաման կը խնդրուի՝ հողերն բռնարարիչ քուրդած ձեռքէն առնելու և վանքն մեծամեծ շրտաներէ աղատելու համար:

Նոյն տեղից գրում են. — Լուսմ ենք, որ Ամենայն Հայոց Տեառն Գեորդ չորրորդ Կաթողիկոսի գործունէութեան պատմագրութիւնը միաւրի գրվում է, Յաջողութիւն և քաջ հմտութիւն աշխատատիրոջին:

—  
ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. — Մայիսի սկզբից մինչև 22ը շարունակ անձրևում էր: Մեր կողմի բոյսերը շատ լաւ են:

—  
ՔՎԻՔԱՍԻ ԹԵՐԹԻՆ հեռագրում են Գանձակից, որ կուր գետը մեծանալով փոքրից դուրս է եկել և շրջակայքի ցանքերը փչացրել և բնակարաններ ջրով ծածկել, կամօրջներ ոչնչացրել: Սաստիկ փոթորիկը, մերթիկը և կարկուտը, դեռ չը տեսնուած այդ երկրում, փչացրել են թէ խաղողի և թէ՛ միւս պտուղները և դարեւոր ժամանակից ծառեր արմատախիլ են արել: Նոյնպէս տան հարկեր քամին պոկել տարել է:

—  
Կ. Պոլսոյ, 22 Յունիս 1882 Տէր.

Միացեալ Ընկերութեանց կեդրոնական ժողովոյ Լր. Նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակէ օր, 27 Յունիս, Ղալաթիոյ կեդրոնական վարժարանին մէջ, ժամը ճիշդ 6ին:

Կը խնդրուի Ձեր մեծազատութենէ որ հաճիք անպատճառ ներկայ զրտնուել սոյն կարեւոր նստին:

Կեդ. ժողովոյ նախագահ Ա. Ա. ՏԻՒՐԻԻ

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընթ. և վաւերացումն նախաստի Ատենագրութեան:
2. Գիւսնական թղթակցութիւն:
3. Ընտրութիւն պակասեալ երեսփոխանաց տեղ:
4. Գործադրութիւն Ա. Յողուածոյ Հիմն. Կանոնադրի (վիճակաւ դադարումն Ա/Կ թուոյն երեսփոխանաց):
5. Առաջարկութիւնք Տնօրէն ժողովոյ:
6. Խնդիր գասագորց.
7. Տեղեկագիր Տնօրէն ժողովոյ (Ապրիլ 23 թուական):
8. Գրութիւն 16 երեսփոխանաց.
9. Տեղեկագիր Արարատեան Ընկ. Հայուէքնիչ Թունձաժողովոյ:

—  
ԱՋԳԱՏՈՒՐ ՀԱՅՈՒՆՆԵՍ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Աղքատուէր Հայուհեաց Ընկերութեան Ընդհ. ժողովը նիստ ունի յառաջիկայ հինգշաբթի, 24 յունիս, ի խորհրդարանի Ղալաթիոյ ժամը 5ին, օրակարգ ունենալով

1. Բացումն չորրորդ շրջանի:
2. Ընթերցումն նախորդ նստի ատենագրութեան:
3. Ընթերցումն դիւանական թղթակցութեանց:
4. Տարեկան համարատուութիւն կեդր. Գործ. ժողովոյ:
5. Ընտրութիւն պակասեալ երեսփոխանահեաց:

Գեր-Ատենագ. պիւր Ատենագետ Եսայի Թ. Խնկէլի:

—  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական խնդրոց մէջ առաջին տեղը կը բռնէ այս պահուս դարձեալ Երկրպետն ինդիւրն որ օր օրի գըրթէ կը ծանրանայ և ուրիշ ամեն



